խուռն բազմութեան կանչն և աղաղակն անտարբեր մտիկ կ'անէր. — ո՞ւր և ինչո՞ւ կ'երթան, արդեօք վերստին պիտի դառնա՞յ իր ծննդեան տեղին, — ամենևին հոգը չէր։ Երևակայութեանը մէջ խոր տպաւորած էր միայն Կամենիցի հրդեհը, որոյ զոհ եղած էր հայրը, ուր և ինքը յաւտահատաբար լալուն և ճչելուն միջոց՝ անծանօթ ծերունի ձեռք մի զինքն ազատած էր կրակէն, և տարած յանձնած էր կուսանաց վանքը՝ Հռիփսիմեայ խնամոց։

Գաղթականաց Հայոց կարաւանն կամ թափօրն կը հասնի Տնեսդեր գետին եզերքը. ուստի միւս կողմ անցնելու արգելք կը լինին. զի Խոթինի անցքը կամ կամուրջը՝ այլազգի զօրքն դէպ 'ի ամրոց անելու կը գործածէ։ Հայոց բանակին գիշերօթելու տեղ կը նշանակուի զառիվայր տափարակ մի, ուր երբեմն Սոպիէպքի Լեհաց թագաւորը մեծ յաղթութիւններ գործել էր։ Հայք ստիպուած էին ամէն տեղ այլազգի կառավարչաց ներկայանալ, և նոցա հրամանին համեմատ յառաջ վարել ճամբանին։ Կ'որոշեն իրենց մէջ այս անգամ պատգամաւոր ղրկելու առ այլազգի կառավարիչն՝ Բուտագովիչ անունով նշանաւոր անձը, որոյ՝ իբրև թարգման՝ կը նշանակեն Ստեփանիկ Ակոբոյ մանուկը. այս առթիւ նա՝ առաջին անգամ կը վարէ իւր ապագային պաշտօնը։ Թէպէտ և Խոթինի բերդակալը Տէրիպալթա՝ կը մերժէ Հայոց խնդիրը, սայլեր չի տար, այլ տեսնելով Հայոց Կամենիցի փաչայէն առած անցագիրը, կը հրամայէ որ առանց մօտենալու արքունի սայլերուն՝ հեռուէն անցնին երթան։

Երկրորդ օրը՝ առաւօտը կանուխ՝ Հայոց բանակը